

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾՆԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ. ԱՐԴՅՈՒՔ ԻՐԱՏԵՍԱԿԱՆ Է

SOCIAL PARTNERSHIP INSTITUTE: WHAT WILL IT LOOK LIKE?

ՀԱՄԱՌՈՍ ԱԿՆԱՐԿ

Մայիս 2008

Այս համառոտ ակնարկը քննարկում է Սոցիալական գործընկերության ինստիտուտի ստեղծման հեռանկարը ԱՅԴԾ-ի ներքո՝ մասնակցային գործընթացի շրաջանակներում:

ՍԳԻ ԷՆ մասնակցային գործընթացի էությունը

Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի արդյունավետությունը հիմնականում կախված է մասնակցային գործընթացի ինստիտուցիոնալացման և վերջինիս իրականացման մակարդակից: Ինստիտուցիոնալացված մասնակցային գործընթացը հանդիսանում է օրինական և ինտեգրվում է երկրի աջ ուղղվածություն ունեցող քաղաքական գործընթացներին, ինչպես նաև այն միավորում է այնպիսի մասնակիցների, որոնք բավականին իրազեկված են գործընթացին ավելի խորը մասնակցելու համար: Մասնակցային գործընթացը առանց նշված նախապայմանների հանդիսանում է պաշտոնական, փորձարարական և անկայուն:

Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի իրականացման նպատակով 2004թ.-ին ստորագրվել էր Գործընկերության համաձայնագիր շահագրգիռ կողմերի միջև, որը կանխորոշեց Հայաստանում մասնակցային գործընթացի ինստիտուցիոնալացումը: Ըստ այդ համաձայնագրի, կողմերը ընդունելով աղքատության հաղթահարման անհրաժեշտությունը, շեշտադրեցին մասնակցային գործընթացի արդյունավետությունը և, կարևորելով ծրագրի ներքո Սոցիալական գործընկերության ինստիտուտին հասնելը, իրենց պատրաստակամությունը հայտնեցին մասնակցել ծրագրի իրականացմանը և մոնիտորինգին: Այսպես, մասնակցային գործընթացը Հայաստանում դարձավ ժողովրդավարության տարածման նախադրյալը և երաշխիքը՝ ուժեղ ու գործուն ժողովրդավարական կառույցներ ստեղծելու միջոցով:

Այնուամենայնիվ, ԱՅԴԾ-ի իրականացման համար առողջ և ուժեղ մասնակցային մեխանիզմ ստեղծելու առաջին փորձի արդյունավետությունը կասկածելի է: Քաղաքացիական հասարակության մասնակցության

1990թ.-ից Խորհրդային միության և Արևելյան Եվրոպայի երկրներում աղքատ անձանց թիվը զգալիորեն աճել էր: Հայաստանը նույնպես, հանդիսանալով Խորհրդային միության երկրներից մեկը, չկարողացավ խուսափել աղքատության հետ բախվելու խնդիրներից: Մի շարք ամբարենպաստ պայմաններ՝ Խորհրդային միության փլուզումը, տնտեսության քայքայումը, որը բնորոշ էր Խորհրդային միության գրեթե բոլոր երկրներին, 1988թ.-ի ավերիչ երկրաշարժը, որը պատճառ դառնալով երկրի որոշ տարածքների ենթակառուցվածքային համակարգի կործանմանը, նախադրյալ դարձան Հայաստանում 1991թ.-ին անկախություն ստանալուց հետո աղքատության բարձր մակարդակի առաջացման համար:

2000թ.-ի մայիսի 15-ին N 267 որոշմամբ ՀՀ վարչապետը նախաձեռնեց Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի զարգացումը: Այդ որոշմամբ ստեղծվել էր Համակարգող խորհուրդ, որը ղեկավարվում էր ՀՀ ֆինանսների և էկոնոմիկային նախարարության կողմից և բաղկացած էր տարբեր նախարարությունների ներկայացուցիչներից, որոնք զբաղվում էին սոցիալական և

փորձը Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի իրականացմանը հաջողված չէր և ծրագրի, որպես «սեփականություն» ընկալումը չարմատավորվեց:¹ Այսպիսով, մասնակցային գործընթացի առաջին փորձը որոշ չափով ձախողվեց, թեև մասնակցային գործընթացի մասին տեղեկացնող զանազան ազգային և միջազգային զեկույցները և նյութերը շեշտում էին, որ միջոցառումներն իրականացվել էին, և բավարար քանակի անձինք ու խմբեր էին ընդգրկվել:²

Այնուամենայնիվ, թույլ մասնակցային մեխանիզմը, որը հիմք դարձավ ԱՅՌԾ-ի վատ իրականացմանը, դեռ պատճառ չէ ժողովրդավարության հիմնական սկզբունքների ոտնահարմանը և շատերին ԱՅՌԾ-ի իրականացման գործընթացին մասնակցելու հնարավորությունից զրկմանը, և կարելի է ասել, որ առաջին փորձը ստեղծեց նախադրյալներ և հնարավորություններ հետագա անելիքների համար: Այսպես, կատարվեց մասնակցային գործընթացի ինստիտուցիոնալացման երկրորդ փորձը՝ ստեղծվեց Սոցիալական գործընկերության ինստիտուտ:

Համաձայն Սոցիալական գործընկերության ինստիտուտի զարգացման նախագծի, փաստաթուղթը պետք է քննարկված լիներ բոլոր շահագրգիռ կողմերի հետ և հիմնական սկզբունքները պետք է իրենց արտացոլումը գտնեին նախագծի վերջնական տարբերակի մեջ, որը հիմք կծառայեր Սոցիալական գործընկերության ինստիտուտի զարգացմանը և ԱՅՌԾ կառավարման համակարգի նոր մեխանիզմների մշակմանը:

Արդյունքում, ԱՅՌԾ Աշխատանքային խումբը 2007թ. սեպտեմբերի 14-ի նիստում քննարկեց սոցիալական գործընկերության զարգացման ուղղությամբ իրականացվելիք հետագա քայլերը: Քննարկման արդյունքում որոշվեց ձևավորել անկախ փորձագետներից կազմված աշխատանքային խումբ, որը կմշակի ԱՅՌԾ շրջանակում սոցիալական գործընկերության ինստիտուտի զարգացման հայեցակարգ, որի հիման վրա այնուհետև կմշակվի Սոցիալական գործընկերության համաձայնագիրը: Միացյալ ազգերի կազմակերպության հայաստանյան գրասենյակի զարգացման ծրագրերի և Գերմանիայի տեխնիկական աջակցության հայաստանյան գրասենյակի աջակցությամբ, մրցույթային կարգով, ձևավորվեց փորձագիտական խումբ, որը մշակեց «Սոցիալական գործընկերության ինստիտուտի զարգացման» հայեցակարգը:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ թեև երկրորդ հանդիպումը տեղի ունեցավ 2008թ. մայիսի 6-ին, նպատակադրվելով հավաքել առաջարկություններ, որոնք կապահովեն քաղաքացիական հասարակության մասնակցությունը որոշումների կայացման, ծրագրի

աղքատության խնդիրներով, ՀՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներից, Ազգային վիճակագրական ծառայությունից, քաղաքական կուսակցություններից, ՀԿ-ներից և դոնոր հանրությունից: Համակարգող խորհրդի հիմնական պարտականություններից էր կազմակերպել և կոորդինացնել ԱՅՌԾ-ի նախնական տարբերակի, իսկ հետագայում՝ ամբողջական փաստաթղթի զարգացումը:

Համաշխարհային բանկը, որպես գլխավոր դերակատարից մեկը Հայաստանում աղքատության հաղթահարելու հարցում, ազգային կառավարության հիմնական աջակիցն էր աղքատության հաղթահարման գործընթացում: Արդյունքում, 2003թ-ին ՀՀ կառավարությունը ընդունեց «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը» (ԱՅՌԾ): Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի նախածնունդում ընդունված հնարավորությունն ընձեռեց մասնակցային գործընթաց ծավալելու համար, ինչը նախադրյալ հանդիսացավ սոցիալական գործընկերության գաղափարի զարգացմանը: Ջանքեր գործածվեցին մասնակցային գործընթացը կառուցվածքային հիմքի վրա դնելու համար՝ ստեղծվեցին կառույցներ և շատ կողմեր ընդգրկվեց այդ գործընթացի մեջ:

իրականացման, մոնիտորինգի ու գնահատման գործընթացներում, շատերը մերժեցին մասնակցության առաջարկը, ինչը կասկածի տակ է առնում ամբողջ գործընթացը: Նախքան շրջադարձ անելը առաջարկություններին և եզրակացություններին, հաջորդ բաժնում կներկայացվի Սոցիալական գործընկերության ինստիտուտի կառուցվածքը:

¹Մանրամասն տեեկությունների համար՝ տես. SPDC policy brief, Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի մասնակցային գործընթաց. Հայաստանի փորձը, տես՝ http://www.cspda.org/articles/downloads/SPDC_policybrief_eng.pdf

²Համաշխարհային բանկ, ԱՅՌԾ-ի մշակման և իրագործման մասնակցային գործընթացը. Հայաստանյան փորձի վերլուծություն (Երևան, 2006).

Սոցիալական գործընկերության ինստիտուտի կառուցվածքը

Ը ստ հայեցակարգի, Սոցիալական գործընկերության ինստիտուտի (ՍԳԻ) նպատակն է հասարակական տարբեր ոլորտները, հանրային ինստիտուտները, սոցիալական խմբերը և խավերը ներկայացնող սուբյեկտների միջև շահերի ներդաշնակեցումը և ջանքերի համադրումը՝ ուղղված ԱՅԻԾ արդյունավետ մշակմանը, իրականացմանը և գնահատմանը:

Այդ կառույցի առաքելությունն է աղքատության հաղթահարման գործընթացով հետաքրքրված բոլոր կողմերի դիրքորոշումների ու շահերի ներկայացման և պաշտպանության համար հնարավորությունների ապահովումը, աղքատության հաղթահարման վերաբերյալ քաղաքականությունների մշակմանը, որոշումների կայացմանը, իրագործմանը և մոնիտորինգին ու գնահատմանը հասարակության մասնակցության միջոցով ԱՅԻԾ իրականացման արդյունավետության բարձրացման համար նախադրյալների ստեղծումը և քաղաքացիական հասարակության կայացման համար բարենպաստ միջավայրի ձևավորման աջակցությունը: Նախատեսվում է նաև Սոցիալական գործընկերության ինստիտուտի մարզային կառույցների ստեղծման աջակցություն:

ՍԳԻ զարգացման հիմնական խնդիրները

Ք ԱՅԻԾ ՍԳԻ միջոցով ԱՅԻԾ մասնակցության ընդգրկվածության և գործունեության շրջանակների (ծրագրային միջոցառումների մշակում, իրականացում, մոնիտորինգ և գնահատում) ընդլայնում:

Ք ԱՅԻԾ ՍԳԻ-ում ներգրավված դերակատարների կողմից սեփական շահերի գիտակցմանը, ներկայացմանը և պաշտպանությանն ուղղված գործունեության արդյունավետության բարձրացում:

Ք Աղքատության հաղթահարմանն ուղղված սկզբունքային մոտեցումների, քաղաքականությունների և դրանց իրականացման մոդելների շուրջ հասարակական համաձայնության ձևավորում:

Ք ԱՅԻԾ ՍԳԻ զարգացման կայունության ինստիտուցիոնալ հիմքերի ընդլայնում:

ՍԳԻ գործառույթները

1. ԱՅԻԾ ՍԳԻ միջոցով ԱՅԻԾ մասնակցության ընդգրկվածության և գործունեության շրջանակների (ծրագրային միջոցառումների մշակում, իրականացում, մոնիտորինգ և գնահատում) ընդլայնում, այդ թվում.

Ք Գործարար շրջանակների ակտիվ ներգրավում ԱՅԻԾ մշակման, իրականացման, մոնիտորինգի և գնահատման գործընթացներում,

Ք Սոցիալական տարբեր խմբերի ներգրավվածության ընդլայնում,

ՔՅԾ կմոբիլանցի շահագրգիռ կողմերին որոշ խնդիրների լուծման համար, կկոորդինացնի աշխատանքները մասնակցային գործընթացի ներքո, ինչպես նաև կուղղի վերջինիս արդյունավետ լուծումները ԱՅԻԾ վերաբերող խնդիրներին

Ք ՏԻՄ-երի, ԱԺ-ի և քաղաքական ուժերի ներգրավում,

Ք Մարզային և համայնքային մակարդակներում ՔՅ կառույցների մասնակցության ընդլայնում, ԱՅԻԾ ՍԳԻ մարզային կառույցների ստեղծման աջակցություն,

Ք Համայնքային մակարդակում հասարակության մասնակցության ընդլայնում,

Ք ՔՅ կառույցների ներգրավվածության ընդլայնում ծրագրային միջոցառումների մշակման, իրականացման, մոնիտորինգի և գնահատման գործընթաց-ներում:

2. ԱՅԻԾ ՍԳԻ-ում ներգրավված դերակատարների կողմից ԱՅԻԾ համատեքստում սեփական շահերի գիտակցմանը, ներկայացմանը և պաշտպանությանն ուղղված գործունեության արդյունավետության բարձրացում, այդ թվում.

Ք ԱՅԻԾ վերաբերյալ կառավարական և ոչ կառավարական հատվածներում առկա տեղեկությունների հավաքագրման և փոխանակման գործընթացի բարելավում,

Ք ՔՅ կառույցների, մասնավորապես անկախ վերլուծական ինստիտուտների զարգացման օժանդակում և այլ դերակատարների հետ համագործակցության ընդլայնում,

Ք ՀԿ-ների կարողությունների զարգացում ԱՅԻԾ-ին առնչվող տարաբնույթ առաջարկությունների փաթեթների մշակման, ներկայացման և լրբինգի ոլորտներում:

3. Աղքատության հաղթահարմանն ուղղված սկզբունքային մոտեցումների, քաղաքականությունների և դրանց իրականացման մոդելների քննարկում և դրանց շուրջ հասարակական

համաձայնության ձևավորում, այդ թվում.

✎ Կառավարական և ոչ կառավարական հատվածների միջև համագործակցության մեխանիզմների կատարելագործում և իրավական հիմքերի բարելավում,

✎ Ըչ կառավարական հատվածի ներսում առանձին դերակատարների շահերի գիտակցման և ընդհանուր շահերի ձևավորման աջակցություն,

✎ ԱՅՌԾ մշակման, իրականացման, մոնիտորինգի և գնահատման գործընթացներում կառավարության համապատասխան մարմինների ներգրավվածության խորացման և ընդլայնման աջակցություն,

✎ ԱՅՌԾ մշակման, իրականացման, մոնիտորինգի և գնահատման գործընթացներում ներգրավված կառավարության համապատասխան մարմինների և ոչ կառավարական ոլորտի ներկայացուցիչների միջև հորիզոնական համագործակցության ընդլայնում:

4, ԱՅՌԾ ՍԳԻ զարգացման կայունության ինստիտուցիոնալ հիմքերի ընդլայնում, այդ թվում.

✎ Քաղաքացիական հասարակության զարգացմանը խոչընդոտող ինստիտուցիոնալ բնույթի հիմնախնդիրների վերացման կարևորում և այդ մոտեցումների արտացոլում ԱՅՌԾ գերակայությունների շրջանակներում,

✎ ԱՅՌԾ ՍԳԻ կառույցի կայացման փուլում պետական շարունակական աջակցության ապահովում:

ՍԳԻ գործունեության հիմնարար սկզբունքները

✎ ԱՅՌԾ ՍԳԻ գործունեության կազմակերպումը և կառավարման համակարգի ձևավորումը՝ «ներքևից-վերև» սկզբունքով,

✎ ԱՅՌԾ ՍԳԻ բոլոր կողմերի համար մասնակցության հավասար հնարավորությունների ապահովում,

✎ ԱՅՌԾ ՍԳԻ ինստիտուտի գործունեության լիակատար քափանցիկության և հաշվետվողականության ապահովում,

✎ ԱՅՌԾ ՍԳԻ գործունեության հիմքում հանրության լայն շրջանակների՝ մասնավորապես «աղքատների ծայնի լսելիության սկզբունքի կիրառում»-ը,

✎ ԱՅՌԾ իրագործման շուրջ կառավարության ու քաղաքացիական հասարակության լայն շրջանակների միջև համագործակցության խորացում՝ շահերի համապատասխանեցման սկզբունքի հիման վրա:

Սոցիալական գործընկերության ինստիտուտի կողմեր են՝ պետական կառավարման մարմինները, ՀՀ Ազգային ժողովը, տեղական ինքնակառավարման մարմինները, քաղաքական կուսակցու-

թյունները, արհեստակցական միությունները, հիմնադրամները, զանգվածային լրատվամիջոցները, հասարակական կազմակերպությունները, առևտրային կազմակերպությունները, Հայ առաքելական եկեղեցին և այլ կրոնական հաստատությունները, այլ ֆորմալ ու ոչ ֆորմալ միավորումները:

ՍԳԻ արդյունավետ գործունեության նախապայմաններ

✎ Հանրապետական, մարզային և համայնքային մակարդակներում ԱՅՌԾ ՍԳԻ-ի կայացման իրավական հիմքերի ստեղծում,

✎ ԱՅՌԾ ՍԳԻ գործունեության համար պետության կողմից բավարար ֆինանսական և նյութատեխնիկական աջակցության ապահովում, այդ թվում դոնորների ներգրավման միջոցով,

✎ ԱՅՌԾ-ում նախատեսված քաղաքականությունների իրագործմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումների համարժեք ֆինանսավորման ապահովում,

✎ ԱՅՌԾ տարածքային տեղայնացում և ըստ խոցելի խմբերի հասցեականության բարելավում,

✎ ԱՅՌԾ միջոցառումների իրականացման մոնիտորինգի և գնահատման կենսունակ համակարգի առկայություն:

Ի տարբերություն նախորդ փորձի, այս հայեցակարգով առաջարկվում է ստեղծել ՍԳԻ Քաղաքացիական համագործակցության ցանց (ՔՀՑ), որը կապահովի քաղաքացիական

ՔՀՑ համագործակցության հիմնական արդյունքը ՍԳԻ ՔՀՑ տարբեր ոլորտների միջև համագործակցության միջավայրի ստեղծումն է ԱՅՌԾ-ի զարգացման, իրականացման, և գնահատման գործընթացներում

հասարակության հավասար և արդյունավետ մասնակցությունը ԱՅՌԾ իրականացման գործընթացին՝ որոշակի խնդիրների շուրջ շահագրգիռ անձանց հավաքագրելու միջոցով:

ՍԳԻ ՔՀՑ-ի ձևավորումը կիրականացվի մինչ այդ գործող ԱՅՌԾ ինստիտուցիոնալ կառույցների բարեփոխման, մասնավորապես Բաց ֆորումի և Բանակցային խմբերի վերակազմավորման միջոցով:

ՍԳԻ ՔՀՑ-ն կկազմավորվի և կգործի հետևյալ մոտեցումների համաձայն

✎ ԱՅՌԾ մասնակցային գործընթացի անցած փուլում պասիվ դիրքորոշում և վարքագիծ ցուցաբերած կողմերի ակտիվացում և նոր

դերակատարների ներգրավում ԱՅԻԾ ՍԳԻ ՔՅՑ կառույցներում: Մասնավորապես Բանակցային խմբերի ֆորմատի ընդլայնում ըստ հասարական, տնտեսական, մշակութային, քաղաքական տարբեր խմբերի ու ինստիտուտների, ինչպես նաև աղքատության հաղթահարման առանցքային խնդիրների:

✂ Աղքատության հաղթահարման առանցքային խնդիրների շուրջ տարբեր ոլորտների և ինստիտուտների ներկայացուցիչներից համատեղ աշխատանքային փորձագիտական խմբերի ձևավորում, ինչը թույլ կտա գտնել շահերի համընկնման եզրերը:

✂ ՍԳԻ ՔՅՑ-ը կկազմակերպվի «ներքևից վերև» սկզբունքով՝ հիմք ընդունելով մասնակիցների ազատ կամքի դրսևորումը և ՍԳԻ Համաձայնագրում ամրագրված մասնակիցների լիազորություններին և պարտականություններին վերաբերող դրույթները:

✂ ՍԳԻ ՔՅՑ-ի կառավարման մարմինը պետք է ձևավորվի Քաղաքացիական հասարակության ինստիտուտների մասնակցությամբ՝ ռոտացիոն սկզբունքով, և պետք է բացառվի կառավարության մասնակցությունը կամ ազդեցությունը ապահովող որևէ հնարավորություն ընձեռող մեխանիզմի գործարկումը:

✂ ՍԳԻ ՔՅՑ-ը պետք է գործի ԱՅԻԾ կառավարման համակարգի ներսում՝ պետական կառավարական կառույցների ազդեցությունից անկախ կարգավիճակով:


✂ ՍԳԻ ՔՅՑ-ը կկատարի իր նպատակներից և խնդիրներից բխող տարեկան ծրագրային գործունեությունը իրականացնելու համար պետության կողմից տրամադրված ֆինանսական և տեխնիկական միջոցների կառավարում, ինչպես նաև այդ գործունեության համար անհրաժեշտ միջոցների հայթայթում դոնոր հանրությունից:

✂ ՍԳԻ ՔՅՑ-ի և կառավարության համագործակցության ընդլայնման և խնդիրների շուրջ ընդհանուր դիրքորոշման ձևավորման նպատակով կկիրառվի համատեղ փորձագիտական խմբերի ստեղծում՝ ՍԳԻ ՔՅՑ-ի անդամների ներկայացուցիչների, անկախ փորձագետների և կառավարության տարբեր գերատեսչությունների աշխատակիցների ներգրավմամբ: Համատեղ փորձագիտական խմբերի նախագծերը կներկայացվեն Աշխատանքային խմբի և Համակարգող Խորհրդի քննարկմանը:

Ավելին, ՔՅՑ-ի կառավարման

մարմինը պետք է կազմված լինի միայն քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից՝ ռոտացիոն սկզբունքի հիման վրա, չընդգրկելով պետական մարմինների ներկայացուցիչների: Որպեսզի կոորդինացվեն աշխատանքները և համաձայնությունը ՍԳԻ ու ՔՅՑ-ի միջև, կազմվելու է մասնագիտական խումբ, որը բաղկացած կլինի ՔՅՑ-ի ներկայացուցիչներից, անկախ մասնագետներից և տարբեր կառավարական բաժինների ներկայացուցիչներից:

Ստորև պատկերվածում ներկայացված են բանակցային խմբերը ըստ գործընկերության համաձայնագրի.



Կրկին ձեռակառնություն կամ ի՞նչ է սպասվում հետագայում

Չնայած ծրագրի շրջանակներում իրականացվող մասնակցային գործընթացի ու սոցիալական հաշվետվողականության մոտեցման և մեխանիզմների առկայությանը, այնուամենայնիվ ինստիտուցիոնալ մեխանիզմները բավականին թույլ են, ինչը խոչընդոտ է հանդիսանում պատշաճ և արդյունավետ մասնակցային գործընթաց կազմակերպելու համար:³ Շատ քննադատներ պնդում են, որ չնայած մասնակցային գործընթացը թղթի վրա տեղի է ունեցել, սակայն իրականում քաղաքացիական հասարակության մասնակցությունը թույլ էր և կրում էր ձևական բնույթ:

Ավելին, թափանցիկության ու հաշվետվողականության պակասը, կողմերի միջև երկխոսության հստակ մեխանիզմների առկայության և ռեսուրսների պակասը, և այլն, տանում է թույլ մասնակցությանը, չնայած այն հանգամանքին որ առկա են սոցիալական գործընկերությունը և համապատասխան մարմինները, որոնք պատասխանատու են թափանցիկ և հաշվետվողական մասնակցային գործընթացի ապահովման համար: Ուստի սոցիալական գործընկերության համաձայնագիրը, լինելով միջոց, որը երաշխավորում է ակտիվ և արդյունավետ մասնակցություն ոչ միայն աշխատանքային խմբի ներկայացուցիչների, այլ նաև հասարակության համար, որոշ չափով ձախողվել է:

Հարցը կայանում է նրանում, որ եթե մինչ այսօր ԱՀՌԾ շրջանակներում քաղաքացիական հասարակության կողմից իրական մասնակցային գործընթաց չկա և այն հիմնականում ուղղված է դոնոր գտնելու համար, ապա ինչո՞ւ Սոցիալական գործընկերության ինստիտուտը պետք է լինի ավելի արդյունավետ: Այն, որ քաղաքացիական հասարակությունը շարժիչ ուժ է հասարակությանը ծրագիրը որպես

Չնայած ակտիվ հանդիպումների և քննարկումների՝ նվիրված Սոցիալական գործընկերության ինստիտուտի զարգացմանը, համաձայն որոշ աղբյուրների շատերը մերժեցին մասնակցության առաջարկը, ինչը կասկածի տակ է ալնում ամբողջ գործընթացը

«սեփական» ընդունելու համար, հայտնի և տարածված ճշմարտություն է, սակայն մինչ այսօր քաղաքացիական հասարակությունը պասիվ և թույլ է: Այս դեպքում ինչո՞ւ հաջորդ փորձը պետք է լինի դրական:

³ Համաշխարհային բանկ, ԱՀՌԾ-ի մշակման և իրագործման մասնակցային գործընթացը. Հայաստանյան փորձի վերլուծություն (Երևան, 2006).

Եզրակացություններ եւ առաջարկություններ

Յայաստանը հասարակության և պետական մարմինների միջև երկխոսության ձևաչափերի ու միջոցների ինստիտուցիոնալացման գործընթացում դեռ որոշ ճանապարհ ունի անցնելու: Հասարակությունը պատրաստ չէ այդ երկխոսությանը իրենց իրավունքները և շահերը պաշտպանելու համար, իսկ բազմազան հասարակական գործակալությունները ամենօրյա խնդիրները լուծելու պատճառով պարզապես հետաքրքրված չեն այդ երկխոսությանը:

Հայաստանի քաղաքացիական հասարակությունը դեռ չունի ինստիտուցիոնալացման և կազմակերպությունների բավարար մակարդակ, որպեսզի ավելի ակտիվ ընդգրկվի Կառավարության հետ երկխոսության մեջ: Սոցիալական քաղաքականության և զարգացման կենտրոնը ներկայացնում է հետևյալ առաջարկությունները

Քաղաքացիական հասարակությունը, հանդիսանալով էական ուժ, դեռևս թերզարգացած է Հայաստանում

Սոցիալական գործընկերության ինստիտուտի վերաբերյալ՝

ՍԳԻ ՔՅՑ նարկայացուցիչների ընտրություններ. երաշխավորելով մասնակիցների հնարավորությունները մասնակցային գործընթացում ընդգրկվելու համար,

պատշաճ կերպով ներկայացնել

արձանագրություններ, գործողությունների զեկույցներ, որոշումներ, այլն,

ընդգրկել այնպիսի մեխանիզմներ, որոնք լսելի կդարձնեն աղքատ անձանց և նրանց ներկայացուցիչների ձայնը, ինչպես նաև ապահովել ԱՅԴՕ իրականացումը,

ապահովել ակտիվ մասնակցություն իրականացման գործընթացում Քաղաքացիական հասարակական կազմակերպությունների նախաձեռնությամբ. պետք է ունակ լինել իրականացնել ԱՅԴՕ մոնիտորինգ և լինել ազդեցիկ, ինչպես նաև կարողանան ստեղծել հանրային մասնակցային գործընթաց,

շահագրգիռ խմբերի ավելի լայն ընդգրկում իրականացման գործընթացում, օրինակ՝ՔՅԿ-ները, կանանց խմբեր, փոքրամասնությունները, քաղաքականություն հետազոտող ինստիտուտներ և ակադեմիաներ,

մասնավոր հատվածը, ինչպես նաև ներկայացուցիչներ տարբեր կրոնական խմբերից,

ՍԳԻ-ի արդյունավետ գործելու նպատակով պետք է ունենա իրավական հիմքեր, ինչով ներկայացնող մարմինները ավելի պատասխանատու կլինեն:

Անհրաժեշտ է նաև, որ այս գործընթացի ամենկարևոր մասնակիցը՝ Կառավարությունը, կամք ցուցաբերի և նպաստի

Կա՞րդյոք երաշխիք, որ մասնակցային գործընթացի հաջորդ փորձը Սոցիալական գործընկերության ինստիտուտի զարգացման տեսանկյունից, կլինի հաջողակ

իրական մասնակցային գործընթացի ապահովման համար և խուսափի ձևականություններից, ինչը շատ տարածված է Հայաստանում այսօր:

Կարևոր է նաև, Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները հետևողական լինեն հասարակական առաջարկությունների ներդրման ժամանակ: Կարևոր է նաև ռազմավարական տեսանկյունից, որ հասարակությունը ԱՅԴՕ-ն ընկալի որպես «սեփական» ծրագիր:

Մոցիալական քաղաքականության և զարգացման կենտրոն

Մոցիալական քաղաքականության և զարգացման կենտրոնը հիմնադրվել է 2004 թվականին: Կենտրոնը նպաստում է այնպիսի սոցիալական քաղաքականությանը, որը ստեղծում է նոր և բարելավված միջոցներ կարիքների բավարարման, խնդիրների լուծման համար, կառուցում է համայնքներ, որոնք հատուկ ուշադրություն են դարձնում երեք հիմնական խնդիրներին՝ աղքատության հաղթահարմանը, կոռուպցիայի դեմ պայքարին և սոցիալական ինտեգրմանը, ինչպես նաև աջակցում է այնպիսի համայնքների ստեղծմանը, որոնք նպաստում են անվտանգությանը, արդարությանը, ազատությանը և ներդաշնակ հասարակությանը և առաջարկում առավել հնարավորություններ կյանքի ավելի բարձր ստանդարտներ բոլորի համար:

Այլ աղբյուրներ.

- ◆ Concept of Social Partnership Institute Enhancement (www.prsp.am)
- ◆ World Bank, Participatory Process of PRSP Elaboration and Implementation: Analysis of Armenian Experience, (Yerevan 2006)
- ◆ World Bank, Social Accountability and Participatory Monitoring Approaches in Armenia: Experience and Opportunities (Yerevan 2006)
- ◆ The process of PRSP elaboration and implementation in Armenia (2006) Institute for Democracy and Human Rights. March 15, 2008. (Webpage: <http://www.idhr.am/prsp/prsp2.htm>)
- ◆ Ishkanian, Armine, Importing Civil Society? The Emergence of Armenia's NGO Sector and the Impact of Western Aid on Its Development. (Armenian Forum 3: 7-36, 2003)
- ◆ Isham J., Narayan D. and Pritchett L, Does Participation Improve Performance? Establishing Causality with Subjective Data. (The World Bank Economic Review 9:175-200, 1995)